



Հաստատված է
«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդի որոշմամբ
Առ 07.03.2016 թ.
«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդի նախագահ՝
_____ Գ.Զաքարյան

ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Ֆինանսական կազմակերպությունների հետ Ապահովագրական գործառույթների պատվիրակման կամ Ապահովագրության գլխավոր պայմանագրերի շրջանակներում կնքված գրավի առարկա հանդիսացող ՏՄ-ի համար)

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ | 3 |
| 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ | 4 |
| 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ | 5 |
| 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ | 5 |
| 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ) | 9 |
| 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ | 10 |
| 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ | 11 |
| 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ | 13 |
| 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ | 13 |
| 10. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ | 14 |
| 11. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ | 15 |
| 12. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ | 19 |
| 13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 26 |
| 14. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ | 29 |
| 15. ՍՈՒԲՐՈՉԱՑԻԱ | 30 |
| 16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ | 31 |

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- 1.1. Ապահովագրող` «ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն` ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրության և ոչ կյանքի վերաապահովագրության իրականացման լիցենզիաներ ունեցող իրավաբանական անձ:
- 1.2. Ապահովադիր` Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, հիմնարկ:
- 1.3. Շահառու` Ապահովադրի կողմից նշանակված իրավաբանական կամ ֆիզիկական անձ Ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցումներ ստանալու համար: Շահառու կարող է լինել այն անձը, ով օրենքով, այլ իրավական ակտով կամ պայմանագրով շահ ունի ապահովագրված տրանսպորտային միջոցի պահպանման հարցում:
- 1.4. Ապահովագրական գումար` ապահովագրության պայմանագրով որոշված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պատահար տեղի ունենալու պարագայում, ապահովագրության պայմանագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում: Ընդ որում, ապահովագրական յուրաքանչյուր հատուցում նվազում է Ապահովագրական գումարից:
- 1.5. Ապահովագրավճար` ապահովագրության դիմաց տրվող վճարն է, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:
- 1.6. Չհատուցվող գումար (Ֆրանշիզա)` Ապահովադրի մասնակցության չափն է վնասի հատուցմանը, որը սահմանվում է ապահովագրության պայմանագրով կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարը վերաբերում է յուրաքանչյուր Ապահովագրական պատահարին և յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի դեպքում նվազեցվում է փաստացի ապահովագրական հատուցումն ենթակա գումարից: Չհատուցվող գումարի տեսակներն են`
 - 1.6.1. Պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.
 - 1.6.2. Ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում ապահովագրողն ազատվում է Պայմանագրում նշված չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց` անկախ վնասի կամ կորուստի ընդհանուր չափից:
- 1.7. Տրանսպորտային միջոց (այսուհետ «ՏՄ»)` մեխանիկական տրանսպորտային միջոց` շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց (բացի այն տրանսպորտային միջոցներից, որոնց շարժիչի աշխատանքային ծավալը չի գերազանցում 50 խորանարդ սանտիմետրը), ինչպես նաև 3 կՎտ-ից ավելի հզորությամբ էլեկտրական շարժիչ ունեցող տրանսպորտային միջոց.
- 1.8. Ապահովագրական ռիսկ` հավանական դեպք կամ իրադարձություն, որի ի հայտ գալու դեպքում իրականացվում է ապահովագրություն: Դեպքը կամ իրադարձությունը, որը դիտվում է որպես ապահովագրական ռիսկ, պետք է օժտված լինի ի հայտ գալու հավանականությամբ և պատահականությամբ:
- 1.9. Ապահովագրական պատահար` ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով ապահովագրողը պարտավորվում է ապահովադիրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:
- 1.10. Ապահովագրության պայմաններ` սույն ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է ապահովագրության պայմանագիրը: Ապահովագրության պայմանները ցամաքային տրանսպորտի ապահովագրության վկայագրի հետ միասին ցամաքային

տրանսպորտի ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասերն են:

- 1.11. Ապահովագրության պայմանագիր` Ապահովադրի և Ապահովագրողի միջև համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պայմանագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի առաջացման դեպքում հատուցել Ապահովադրին կամ այլ անձին, որի օգտին կնքվել է պայմանագիրը, ապահովագրված գույքին պատճառված վնասը, որն առաջացել է այդ պատահարի հետևանքով կամ վնասը`կապված Ապահովադրի գույքային այլ շահերի հետ: Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն ապահովագրության սույն Պայմանների նկատմամբ:
- 1.12. SU ապահովագրության դիմում` Ապահովագրողի պահանջով Ապահովադրի կողմից գրավոր ձևով ներկայացվող տեղեկություններ: Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից` Ապահովադրի խոսքերից ելնելով: Դիմումում ներառված տեղեկությունների իսկությունն Ապահովադիրը հաստատում է իր ստորագրությամբ:
- 1.13. SU լրացուցիչ սարքավորում` SU գործարանային հավաքակազմի մեջ չմտնող սարքավորում, այսինքն` այնպիսի սարքավորում, որը տեղադրված չէ SU արտադրման (հավաքման) ժամանակ SU արտադրող գործարանի կողմից:
- 1.14. Շահագործման ընթացքում գտնվող SU - ավտոտրանսպորտային միջոցի շարժիչի գործադրմամբ կամ առանց դրա, սակայն երթևեկության մեջ գտնվող ավտոտրանսպորտային միջոց, որը չի գտնվում կանգառի, կայանման կամ քարշակման (եվակուացման) մեջ :

Ապահովագրության սույն Պայմանների շրջանակներում առանձին տերմիններով տրված են հատուկ սահմանումներ, որոնք կիրառելի են միայն ապահովագրության սույն Պայմանների շրջանակներում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 2.1.Սույն Պայմանների հիման վրա և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողն Ապահովադիրների հետ կնքում է SU-ի ապահովագրության, SU-ի լրացուցիչ սարքավորման ապահովագրության պայմանագրեր:
- 2.2.Ապահովադիր կարող է լինել անձը`
 - 2.2.1. որն ունի օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ, որը տիրապետում է SU-ին` սեփականության իրավունքով, SU-ի սեփականատիրոջից ստացված լիազորագրով, հավատարմագրային կառավարման իրավունքով, SU սեփականատիրոջ հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա:
 - 2.2.2. Ապահովադրի կամ շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված գույքի ապահովագրության պայմանագիրն անվավեր է:
- 2.3.Սույն պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի գործողությունը տարածվում է ՀՀ և ԼՂՀ տարածքում, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, բացառությամբ զինված հակամարտությունների, պատերազմների, արտակարգ իրավիճակների տարածքների:
- 2.4.Բոլոր գրավոր ծանուցումները և լրացուցիչ փաստաթղթերն ուղարկվում են Պայմանագրում նշված Ապահովադրի հասցեով: Ապահովադրի` պայմանագրում նշված հասցեի փոփոխության դեպքում Ապահովադիրն Ապահովագրողին տեղեկացնում է այդ մասին` ներկայացնելով նոր հասցե, որով Ապահովադիրը համաձայն կլինի ստանալ Ապահովագրողի կողմից Պայմանների համաձայն Ապահովադրին ուղարկվող ծանուցումները: Եթե Ապահովադիրը չի տեղեկացնում Ապահովագրողին հասցեի փոփոխության վերաբերյալ, ապա Ապահովադրի կողմից

ներկայացված վերջին հասցեով Ապահովագրողի կողմից ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ կարգով ուղարկված:

2.5. Ցանկացած դեպք, որը ծածկույթի մեջ ներառված չէ, ապահովագրական պատահար չի համարվում:

2.6. Սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրության տարբեր ծրագրեր/պրոդուկտներ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

3.1. Ապահովագրության օբյեկտ են համարվում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի կամ Շահառուի այն գույքային շահերը, որոնք կապված են ՏՄ, ՏՄ լրացուցիչ սարքավորման վնասվելու, ոչնչացման կամ կորստի հետ:

3.2. Սույն Պայմանների հիման վրա ապահովագրության ենթակա են.

3.2.1. ՀՀ ճանապարհային ոստիկանությունում հաշվառված և ուժի մեջ գտնվող տեխնիկական զննության կտրոնի առկայությամբ տեխնիկական զննություն անցած ՏՄ (բացառությամբ նոր թողարկված (տվյալ տարում արտադրված) տրանսպորտային միջոցների): Ապահովագրողի հետ համաձայնեցնելուց հետո թույլատրվում է ՏՄ ապահովագրություն տեղեկանք-հաշվի հիման վրա, այսինքն՝ մինչև ՏՄ գրանցումը ՀՀ ՃՈ և տեխնիկական զննության անցումը: ՏՄ տեխնիկական վիճակը պետք է համապատասխանի պահանջվող չափանիշներին, տեխնիկական շահագործման պահանջներին, արտադրող գործարանի հրահանգներին և այլ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերին:

3.2.2. ՏՄ լրացուցիչ սարքավորումը՝ բացառությամբ մոնտաժ չպահանջող լրացուցիչ սարքավորման:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

4.1. Սույն Պայմաններին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագրով կարող է իրականացվել հետևյալ ռիսկերի ապահովագրություն.

4.1.1. «Վնաս»՝ ապահովագրված ՏՄ-ի, կամ նրա մասերի վնասումը կամ ոչնչացումը, որը տեղի է ունեցել.

- 1) Ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ) հետևանքով, այդ թվում շարժվող կամ անշարժ առարկաների հետ բախման դեպքում (շինություններ, արգելքներ, կենդանիներ և այլն),
- 2) Շրջման հետևանքով,
- 3) Հրդեհի, հրդեհի մարման, պայթյունի հետևանքով,
- 4) Տարերային աղետների դեպքում,
- 5) Ապահովագրված ՏՄ-ի վրա կողմնակի առարկաների վայր ընկնելու կամ դիպչելու հետևանքով,
- 6) Ապահովագրված ՏՄ-ի նկատմամբ երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով (ներառյալ ապահովագրված ՏՄ-ի առանձին մասերի և դետալների առևանգումը):

4.1.1.1. Ապահովագրական պատահար չի համարվում.

- 1) Եթե Պայմանագրում/Վկայագրում այլ բան նախատեսված չէ, ՏՄ-ի երթևեկության ընթացքում ճանապարհի երթևեկելի մասից դուրս գալու և վթարվելու հետևանքով ՏՄ-ի վնասը կամ լրիվ ոչնչացումը, անկախ երթևեկելի մասից դուրս գալու պատճառից, այդ թվում՝ կառավարումը կորցնելու, սահելու, անսարքության, այլ ՏՄ-ի, առարկայի կամ կենդանու հետ բախումից խուսափելու կամ այլ պատճառով, բացառությամբ ճանապարհի երթևեկելի մասում մեկ այլ ՏՄ-ի, այլ անշարժ կամ շարժական առարկայի կամ կենդանու

հետ բախման պատճառով ՏՄ-ի երթևեկելի մասից դուրս գալու հետևանքով պատճառված վնասը: Սույն կետը չի տարածվում այն դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել բակային կամ ճանապարհից դուրս այլ տարածքներում երթևեկության ընթացքում: Սույն պայմաններով ճանապարհի երթևեկելի մաս է համարվում ճանապարհի տարրը՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար /ՃԵԿ 1.7 կետ/: Գնացուցակի երթևեկելի մաս չեն համարվում ճանապարհի մյուս տարրերը, այդ թվում՝ մայթերը, ճանապարհի եզրաքարերը /բորդյուր/ և բարձրացված անվտանգության կղզյակները /ՃԵԿ ձև 2, 2.7 կետ/, կողնակը, այն է՝ երթևեկելի մասին հարող, դրանից ծածկույթի տեսակով տարբերվող կամ համապատասխան գծանշումով առանձնացված ճանապարհի տարրը, ինչպես նաև դաշտամիջյան՝ հողածածկ ճանապարհի բանուկ մասին հարող տարածքը:

- 2) ապահովագրված ՏՄ-ի ապրանքային արժեքի կորուստը, շահագործման հետևանքով ցամաքային տրանսպորտի բնական մաշվածությունը,
- 3) ՏՄ-ի ապակիների և դռների բաց թողնելու հետևանքով առաջացած վնասները,
- 4) սրահի երեսպատման վնասումը (ծխախոտի, սուր կտրող առարկաների և այլնի ազդեցության հետևանքով),
- 5) կենդանիների, թռչունների և միջատների, նաև դրանց արտաթորանքի կողմից ՏՄ-ի ներկածածկույթին հասցված վնասները,
- 6) Ապահովագրական պատահարով չպայմանավորված Ապահովադրի կողմից ՏՄ-ի իր նախաձեռնությամբ ընթացիկ վերանորոգման հետ կապված ծախսերը
- 7) գործիքների հավաքածուի, դեղարկղիկի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի, ստացիոնար հակաառևանգման միջոցների հափշտակումը, վնասումը, ոչնչացումը, էթե վերջիններս արտադրող գործարանի կողմից չեն հաստատվել կամ չեն ապահովագրվել որպես լրացուցիչ սարքավորում,
- 8) բեռնատար ավտոմեքենաների, մարդատար ավտոմեքենաների բեռնատար մոդիֆիկացիաների, կաբրիալետների, կցորդների և կիսակցորդների պարուսինածածկին պատճառված վնասը:

4.1.2. «Առևանգում»

Սույն Պայմանների շրջանակներում «Առևանգում» ռիսկի տակ հասկացվում են հետևյալ իրադարձությունները, որոնց արդյունքում Ապահովադրին (Շահառուին) հասցվել է վնաս.

- 1) «Գողություն առանց փաստաթղթերի»,
 - «Գողություն առանց փաստաթղթերի» ասելով հասկացվում է ապահովագրված ՏՄ-ի ապօրինի, գաղտնի, հափշտակությունը՝ առանց տվյալ ՏՄ-ի բանալիների կամ գրանցման փաստաթղթերի (ՏՄ գրանցման մասին վկայականի կամ ՏՄ տեխնիկական անձնագրի):
- 2) . «Կողոպուտ»
 - «Կողոպուտ» ասելով՝ հասկացվում է ապահովագրված ՏՄ-ի ապօրինի բացահայտ հափշտակությունը:
- 3) «Ավազակություն»
 - «Ավազակություն» ասելով հասկացվում է՝ ապահովագրված ՏՄ-ի կորուստ՝ ապօրինի, բացահայտ հափշտակության հետևանքով, որը կատարվել է Ապահովադրի կամ ապահովագրված ՏՄ-ն վարելու լիազորություն ունեցող այլ անձի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ ապահովագրված ՏՄ-ը հափշտակելու համար նրանց կողմից ցուցաբերած դիմադրությունը ճնշելու նպատակով,
- 4) «Տրանսպորտային միջոցին ապօրինաբար տիրանալը (փախցնելը) առանց հափշտակելու նպատակի՝ առանց փաստաթղթերի»
 - «Ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալը

(փախցնելը) առանց հափշտակելու նպատակի՝ առանց փաստաթղթերի» ասելով հասկացվում է՝ ապահովագրված ՏՄ-ին ապօրինաբար տիրանալը այլ անձանց կողմից՝ դրա բանալիների կամ պահակային կառավարման կամ պահակային/որոնողական համակարգերի, կամ գրանցման փաստաթղթերի (ՏՄ գրանցման մասին վկայականի կամ ՏՄ անձնագրի) բացակայության պայմաններում,

4.1.2.1. Ապահովագրական պատահար չի համարվում.

Ապահովագրված ՏՄ-ի չվերադարձնելը Ապահովադրին վարձույթի, վարձակալության, լիզինգի փոխանցված ՏՄ-ի համար, սույն Պայմանների 4.1.2. կետերում չնախատեսված այլ դեպքերի արդյունքում:

4.1.3. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկով հատուցվում է՝ ապահովագրված ՏՄ-ի վրա տեղադրված լրացուցիչ սարքավորման վնասումը, կորուստը, ոչնչացումը 4.1.1. և 4.1.2. կետերում թվարկված դեպքերի արդյունքում:

4.1.3.1. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրական պատահար չի համարվում Վնասը, որն առաջացել է՝

- ապահովագրված ՏՄ-ի լրացուցիչ սարքավորման ապրանքային արժեքի կորստի, լրացուցիչ սարքավորման շահագործման հետևանքով առաջացած բնական մաշվածության արդյունքում, շարժական առջևի պանելով ապահովագրված ավտոմագնիտոլայի կամ առջևի պանելի կողոպուտի, վնասման, ոչնչացման հետևանքով, եթե առջևի պանելը թողնվել է ապահովագրված ՏՄ-ում:

Եթե ՏՄ-ն ապահովագրված չէ «Վնաս» ռիսկի գծով, ապա սույն ապահովագրության Պայմանների 4.1.1. կետով թվարկված «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով դեպքերը ապահովագրական պատահարներ չեն համարվում:

Եթե ՏՄ-ն ապահովագրված չէ «Կողոպուտ» ռիսկի գծով, ապա սույն ապահովագրության Պայմանների 4.1.2. կետով թվարկված «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով դեպքերը ապահովագրական պատահարներ չեն համարվում:

4.2. Բոլոր ռիսկերի գծով ապահովագրական պատահարներ չեն համարվում.

4.2.1. Բարոյական վնասը, բացթողնված օգուտը, վերանորոգումից հետո մեքենայի շուկայական գնի նվազումը, հասարակ ու հարկադիր պարապուրդը, եկամտի կորուստը և այլ անուղղակի և առևտրական կորուստները, վնասները և ծախսերը ինչպես Ապահովադրի և Շահառուի, այնպես էլ երրորդ անձանց, ինչպես օրինակ՝ տուգանքները, ապահովագրված ՏՄ վերանորոգման ժամանակ հյուրանոցում բնակվելը, գործուղման ծախսերը, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ժամկետների հետ կապված ծախսերը և այլն:

4.2.2. Ապահովագրված ՏՄ-ում գտնվող գույքի վնասումը և ոչնչացումը:

4.2.3. Դեպքերը, որոնք տեղի են ունեցել Ապահովադրի, Շահառուի, ապահովագրության պայմանագրով ապահովագրված ՏՄ-ը վարելու լիազորություն ունեցող անձի, ապահովագրված ՏՄ-ի ուղևորի կանխամտածված գործողությունների արդյունքում՝ ուղղված ապահովագրական պատահարի առաջացմանը, կամ վերը նշված անձանց կողմից հանցագործության կատարման կամ հանցագործություն կատարելու փորձի արդյունքում:

4.2.4. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել ապահովագրված ՏՄ-ն Ապահովադրի տնօրինումից դուրս գտնվելու ժամանակահատվածում:

4.2.5. Դեպքերը, որոնք տեղի են ունեցել ապահովագրված ՏՄ-ն այն անձի կողմից վարելու ժամանակ, ով՝

- 1) ապահովագրության պայմանագրում չի հանդիսանում լիազորված վարորդ կամ չունի

- տվյալ տեսակի SU-ը վարելու իրավունք տվող գործող վարորդական վկայական,
- 2) պատահարի պահին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված բժշկական փորձաքննությունից հետո պարզվել է, որ վթարի պահին գործող օրենսդրության համաձայն գտնվում է ոչ սթափ վիճակում ինչպես նաև, եթե SU վարորդն առանց հիմնավոր պատճառի լքել է ՃՏՊ-ի վայրը կամ հրաժարվել է անցնել բժշկական փորձաքննություն:
- 4.2.6. Դեպքերը, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի տարածքից և գործողության ժամկետից դուրս:
- 4.2.7. Մրցույթների, փորձությունների կամ ուսումնական երթերի ժամանակ ապահովագրված SU-ի օգտագործման ընթացքում:
- 4.2.8. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել ապահովագրված SU-ի լիզինգի, վարձակալության, վարձույթի հանձնելու կամ գրավադրման արդյունքում առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության:
- 4.2.9. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել Ապահովադրի կամ լիազորված վարորդի կողմից SU շահագործման կանոնների խախտման արդյունքում, այդ թվում՝ SU շահագործումը ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով, ճանապարհային երթևեկության անվտանգության մասին ՀՀ օրենքով արգելված տեխնիկական վիճակում, կամ որոնք տեղի են ունեցել ոչ գործարանային պայմաններում SU վերաձևափոխման հետևանքով, անկախ փոփոխության տեսակից, այդ թվում նաև որն առաջացրել է էլեկտրական լարման կամ այլ փոփոխությունների և դրա հետևանքով բռնկվել է հրդեհ, կամ որոնք տեղի են ունեցել հակահրդեհային պաշտպանության կանոնների, պայթյունազնային և հրդեհավտանգ նյութերի, առարկաների փոխադրման և պահպանման կանոնների, բեռների փոխադրման ընթացքում պահանջվող կանոնների խախտման արդյունքում:
- 4.2.10. Դեպքերը, որոնք տեղի են ունեցել վառելիքի, պայթյունազնային ապրանքների և այլ ապրանքների տեղափոխման, բեռնման, բեռնաթափման ընթացքում պայթյունի կամ հրդեհի հետևանքով, որոնք նախատեսված չեն ապահովագրված տրանսպորտային միջոցով տեղափոխելու համար:
- 4.2.11. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել ապահովագրված SU-ի բեռնման, բեռնաթափման կամ փոխադրման ժամանակ ցանկացած տրանսպորտային միջոցով (բացառությամբ ապահովագրված SU քարշակով տանելը ճանապարհային երթևեկության բոլոր պայմանների պահպանմամբ, ինչպես նաև վնասված ապահովագրված SU փոխադրման դեպքերը հատուկ դրա համար նախատեսված տրանսպորտային միջոցով):
- 4.2.12. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ներգործության հետևանքով:
- 4.2.13. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների և գործադուլների հետևանքով պետական մարմինների կարգադրությամբ ապահովագրված SU-ի բռնագրավման, ազդարարման, կալանքի կամ վերացման դեպքում:
- 4.2.14. Անվաղողերի, անվահեծերի (բացառությամբ պահեստային անվաղողի), անիվների սկավառակների, ցեխահավաքների, SU-ի բանալիների, հակաառևանգման համակարգի, դրա հեռակառավարման վահանակի, ապակիների խոզանակների, համարանիշի, կողային հայելիների կորուստը՝ գողության կամ այլ ճանապարհով:
- 4.2.15. SU շահագործման ընթացքում SU ներքին մասերի, հանգույցների և ագրեգատների, այդ թվում՝ ընթացային, դեկային, շարժիչի, փոխանցման տուփի, անվահեծերի և դրանց դեկորատիվ կափարիչների, անվաղողերի և SU-ն շարժման մեջ դնելու համար ծառայող այլ դետալների վնասվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ նույն պատահարի արդյունքում միաժամանակ վնաս է պատճառվել նաև SU թափքին, պաշտպանիչ վահաններին կամ լուսարձակներին:

- 4.2.16. SU-ին բնական գործոնների (ավազ, աղ, փոքր չափի քարեր, ծառերի կամ թփուտների ճյուղեր, ավտոմեքենայի լվացում և այլն) ներգործության պատճառով լաքաներկային ծածկի վնասումը, որը թափքի կամ նրա առանձին մասերի երկրաչափական չափսերի ձևախախտման չի հանգեցրել:
- 4.2.17. Մարտկոցի կամ այլ էլեկտրասարքավորումների վնասումը թույլ միացման հետևանքով, որոնք չեն հանգեցրել հրդեհի:
- 4.2.18. շրջակա միջավայրին պատճառված վնասը,
- 4.2.19. երկրաշարժի հետևանքով ապահովագրության օբյեկտին պատճառված վնասը
- 4.2.20. դեպքեր, երբ ապահովագրված SU-ի Ապահովագրության պայմանագրով նախատեսված է տեսաձայնագրող սարքի ձայնագրության պարտադիր առկայություն հայտի կարգավորման համար, սակայն Ապահովագրի կողմից այն չի պահպանվել կամ չի ներկայացվել:
- 4.2.21. SU գործարանային հավաքակազմի /ըստ SU VIN կոդի/ մեջ չմտնող սարքավորմանը, հանգույցին, դետալին, կամ արտաքին ձևավորմանը (tuning) պատճառված վնասը: Սակայն եթե SU թափքի մաս կազմող արտաքին դետալները, պաշտպանիչ վահանները, լուսարձակները, կողային հայելիները, անվահեծերը կամ անվաղողերը փոխարինվել են գործարանային հավաքակազմից տարբերվող նույնատիպ դետալով և ապահովագրական պատահարի հետևանքով տվյալ դետալին պատճառված վնասը հնարավոր է վերականգնել վերանորոգման եղանակով՝ տնտեսապես հիմնավորված և տեխնիկապես հնարավոր լինելու պայմանով, ապա պատահարով հատուցում տրամադրելու համար պարտադիր սույն պայմաններով սահմանված այլ դրույթներին համապատասխանելու դեպքում վնասի հաշվարկը կատարվում է գործարանային դետալի վերանորոգման արժեքին համամասնորեն և տրամադրվում է հատուցում:
- 4.2.22. Երրորդ անձի կողմից ապահովագրված SU-ին ապօրինաբար տիրանալը՝ շորթման, , խարդախության, պաշտոնական դիրքը չարաշահելու, յուրացման, վատնման միջոցով::
- 4.2.23. SU-ի վնասումը՝ ոչ համապատասխան որակի ավտոպահեստամասերի, նյութերի կամ վառելիքի պատճառով;
- 4.2.24. Տեխնիկապես ոչ սարքին վիճակում գտնվելիս SU-ի շահագործման ընթացքում առաջացած վնասները
- 4.2.25. SU-ի շահագործման կանոնների չպահպանման և ոչ նպատակային շահագործման հետևանքով առաջացած վնասները;
- 4.2.26. Եթե վարորդը լքել է իր տեղը կամ թողել է տրանսպորտային միջոցը, և նրա կողմից չեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք բացառում են տրանսպորտային միջոցի ինքնաբերաբար շարժումը կամ դրա օգտագործումը իր բացակայության ժամանակ:

Հատուցման ենթակա չէ նաև՝

- տրանսպորտային միջոցի վնասված դետալների փոխարեն տրանսպորտային միջոցի ամբողջական ներկման հետ կապված ծախսերը՝ համապատասխան ներկի բացակայության պատճառով

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

- 5.1. Ապահովագրության ժամանակ SU-ի, լրացուցիչ սարքավորման ապահովագրական գումարը նշվում է ապահովագրության պայմանագրում, կարող է նշվել նաև յուրաքանչյուր ռիսկի համար առանձին:
- 5.2. Ապահովագրության պայմանագրով նշված ռիսկի գծով ապահովագրական գումարը այն դրամական գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում (անկախ ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում դրանց քանակից) վճարել ապահովագրական

հատուցում:

- 5.3. Եթե ՏՄ ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարը գերազանցել է ապահովագրական արժեքը, ապա ՏՄ պատճառված վնասը հատուցման ենթակա է միայն ապահովագրական արժեքի չափով: Այդ դեպքում ապահովագրավճարի հավելյալ վճարված մասը չի վերադարձվում:
- 5.4. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարները «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով գերազանցել է ապահովագրական արժեքը, ապա պատճառված վնասը հատուցման ենթակա է միայն ապահովագրական արժեքի չափով: Այդ դեպքում ապահովագրավճարի հավելյալ վճարված մասը չի վերադարձվում:
- 5.5. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարները «Վնաս» և/կամ «Կողոպուտ» ռիսկերի գծով պակաս են ՏՄ իրական արժեքից, ապա ապահովագրական հատուցման չափը որոշվում է իրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ:
- 5.6. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարները «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ցածր են լրացուցիչ սարքավորման իրական արժեքից, ապա ապահովագրական հատուցման չափը որոշվում է իրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ:
- 5.7. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրության պայմանագրում գումարը նշվում է յուրաքանչյուր ապահովագրված օբյեկտի համար առանձին:
- 5.8. Ապահովագրական գումարը (Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ) սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը կարող է նշվել արտարժույթով, որի համարժեքը համապատասխան գումարն է ՀՀ դրամով (այսուհետ՝ ապահովագրությունն արժույթային համարժեքով): Ընդ որում արտարժույթային ռիսկի նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու նպատակով Ապահովագրողն իրավունք ունի կիրառել սահմանափակումներ արտարժույթների փոխարժեքի փոփոխության չափի վրա, որն ընդունվում է Ապահովագրողի կողմից որպես թույլատրելի արժույթային համարժեքով ապահովագրության կիրառման համար: Այդպիսի սահմանափակումների կիրառումը հնարավոր է դրա պատշաճ ամրագրման դեպքում ապահովագրության պայմանագրում կամ ապահովագրության սույն Պայմաններում:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

- 6.1. Ապահովադիրը, Ապահովագրողի պահանջով, պարտավոր է լրացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևի դիմումը: Ապահովագրության դիմումը լրացվում է կամ Ապահովադրի, կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից: Ապահովադրի խնդրանքով և իր խոսքերով դիմումը կարող է լրացնել նաև Ապահովագրողի ներկայացուցիչը: Դիմումի բոլոր կետերը պետք է լրացվեն ընթերցելի ձևով, որը չի ենթադրում երկակի բացատրություն: Ապահովագրության դիմումի մեջ նշված տեղեկությունների ճշմարտացիության համար պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված դիմումը ստորագրվում և հաստատվում է Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից:
- 6.2. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը պարտավոր է՝
 - 6.2.1. Ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը (ապահովագրական ռիսկ) որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, եթե այդ հանգամանքները հայտնի չեն և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին: Ամեն դեպքում էական են համարվում Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրում և Ապահովադրի գրավոր դիմումում նշված հանգամանքները:

- 6.2.2. Ապահովագրողին ներկայացնել SU վերաբերյալ փաստաթղթերը (SU գրանցման վկայականը կամ հաշիվ-տեղեկանք, SU տեխնիկական անձնագիր), ինչպես նաև Ապահովագրողի պահանջով SU-ին վերաբերող այլ փաստաթղթեր: Օրինակ՝ SU-ի մաքսային փաստաթղթերը, առք ու վաճառքի պայմանագիրը:
- 6.2.3. Եթե Ապահովադիրը SU սեփականատեր չի հանդիսանում, ապա նա բացի 6.2.2. կետում նշված փաստաթղթերից պարտավոր է ներկայացնել SU տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթեր:
- 6.2.4. Ապահովագրողի պահանջով SU-ն ներկայացնել զննման: Ապահովագրության դիմումի մեջ Ապահովագրողի կողմից լրացվում է զննման արդյունքում հայտնաբերված վնասները և SU-ն լուսանկարվում է: Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում Ապահովագրված SU-ի այն վնասների համար, որոնք առկա են ապահովագրության պայմանագրի կնքման պահին:
- 6.3. Եթե ապահովագրության պայմանագրի կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովադիրն Ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ ապահովագրության Պայմանների 6.2.1. կետում նշված հանգամանքների մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրության պայմանագիրը ճանաչել անվավեր և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքները:
- 6.4. Ապահովագրողն իրավունք ունի նվազեցնել կամ մերժել ապահովագրական պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական հատուցման վճարումը, եթե ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադիրն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է ապահովագրական ռիսկը գնահատելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ:
- 6.5. Ապահովագրողն ապահովագրության պայմանագրում Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա, նշում է այն անձանց, ովքեր լիազորված են տվյալ ապահովագրության պայմանագրով ապահովագրված SU վարելու, նրանց ծննդյան ամսաթիվը, վարորդական ստաժը՝ նշելով ստաժի սկզբնական ամսաթիվը (առաջին վարորդական իրավունքի վկայականի ստացման ամսաթիվը):
- 6.6. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում կարող են սահմանվել ապահովագրության ընդունվող SU պահպանման կոնկրետ պայմաններ գիշերային ժամերին:
- 6.7. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողն Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա Ապահովադրին տրամադրում է պայմանագրի կրկնօրինակը: Կրկնօրինակը տրամադրելուց հետո կորած ապահովագրության պայմանագիրը (վկայագիր) համարվում է անվավեր և դրա հետ կապված որևէ վճարում չի կատարվում:
- 6.8. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել SU-ի տեխնիկական վիճակը, ինչպես նաև հակաառևանգման համակարգի առկայությունը և սարքինությունը:.

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ դրամով կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով:
- 7.2. Ապահովագրական գումարը արտարժույթով նշելու դեպքում ապահովագրավճարն իրականացվում է ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանած փոխարժեքով:
- 7.3. Մեկ տարուց ոչ պակաս ժամկետով ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադրին կարող է տրվել հնարավորություն տարածամկետ կարգով կատարել ապահովագրավճարի վճարումը: Ապահովագրավճարի

չափաբաժինները և վճարման ժամկետները սահմանվում են ապահովագրության պայմանագրով:

- 7.4. Տարածամկետ կարգով վճարվող ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասն Ապահովադիրը պարտավոր է վճարել ապահովագրության պայմանագրով սահմանված գործողության սկզբից ոչ ուշ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 7.5. Եթե ապահովագրության պայմանագրում նշված է տարածամկետ «կիսամյակը մեկ» կամ «երկու վճարումով՝ յուրաքանչյուր անգամ ապահովագրավճարի 50%-ի չափով» կարգով, վճարվող ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասը չպետք է պակաս լինի ապահովագրավճարի ամբողջ չափի 50%-ից, իսկ ապահովագրավճարի մնացած մասի վճարման համար չպետք է սահմանվի ավելի ուշ ժամկետ, քան պայմանագրի գործողության ժամկետի կեսը:
- 7.6. Եթե ապահովագրության պայմանագրում նշված է տարածամկետ վճարման կարգ «եռամսյակը մեկ անգամ» կամ «չորս չափաբաժնով՝ յուրաքանչյուրը ապահովագրավճարի 25%-ի չափով», ապա Ապահովադիրը պարտավոր է ապահովագրավճարը վճարել չորս հավասար մասերով: Ապահովադիրը պարտավոր է վճարել երկրորդ, երրորդ և չորրորդ մասերը ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև համապատասխանաբար 2-րդ, 5-րդ և 8-րդ ամիսների լրանալը:
- 7.7. Մեկ տարուց պակաս ժամկետով ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ մինչև ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը:
- 7.8. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չի ծանուցում այդ մասին Ապահովադիրին և միակողմանի լուծում է պայմանագիրը, և ազատվում Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:
- 7.9. Եթե Ապահովադիրն ապահովագրավճարը վճարում է պայմանագրի դադարեցումից կամ ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, և մինչև ապահովագրավճար վճարելն ապահովագրական պատահարը չի առաջացել, ապա պայմանագիրը չի համարվում ուժը կորցրած: Վճարումները կատարելու դեպքում պահանջվում է Ապահովագրված SU գնում և SU գնման ակտի կազմում: Ընդ որում՝ եթե հետագայում պարզվի, որ մինչև ապահովագրավճար վճարելը տեղի է ունեցել ապահովագրական պատահար, ապա Ապահովագրողը պատասխանատվություն չի կրի այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել պայմանագրի դադարումից մինչ դրա վերականգնումն ընկած ժամանակահատվածը և պայմանագիրը կհամարվի ուժը կորցրած:
- 7.10. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված Ապահովագրական վճարի գումարը:
- 7.11. Ապահովադիրը զրկվում է ապահովագրավճարի տարածամկետ վճարման իրավունքից, եթե մինչ ապահովագրավճարի հերթական մասի վճարումը Ապահովադիրը հայտարարել է ապահովագրական պատահարի առաջացման մասին «Կողոպուտ» ռիսկի գծով կամ «Վնաս» ռիսկի գծով «Լրիվ ոչնչացում» պայմաններով պահանջի կարգավորման դեպքում: Այդ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից վաղաժամկետ վճարել ապահովագրավճարի չվճարված մասը կամ պահել չվճարված ապահովագրավճարի մասը ապահովագրական հատուցուման ենթակա գումարից:

- 7.12. Արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ վճարման (փոխանցման) օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
- 7.13. Այն դեպքերում, երբ ՀՀ օրենսդրությամբ թույլատրված են Պայմանագրի կողմերի միջև հաշվարկները արտարժույթով, ապահովագրավճարը կարող է սահմանվել, ինչպես նաև վճարվել արտարժույթով:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 8.1. Ապահովագրության պայմանագիրը, եթե դրանում այլ բան նախատեսված չէ, կնքվում է մեկ տարի ժամկետով:
- 8.2. Ապահովագրության պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ուժի մեջ է մտնում՝
 - 8.2.1. Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ գումարը Ապահովագրողին կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին վճարման պահից, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 00:00:
 - 8.2.2. Ապահովագրավճարն ամբողջությամբ կամ դրա առաջին մասի հաշվարկային հաշվից անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովադրի հաշվարկային հաշվից Ապահովագրողի կողմից նշված բանկում նրա հաշվարկային հաշվին գումարի փոխանցման օրվան հաջորդող օրվա 00:00, բայց ոչ շուտ, քան ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 23:59:
- 8.3. Պայմանագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում որպես ավարտի օր նշված օրվա տեղական ժամանակով ժամը 23:59-ն:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

- 9.1. Ապահովագրության պայմանագիրը դադարում է հետևյալ դեպքերում՝
 - 9.1.1. Պայմանագրում սահմանված ժամկետը լրանալու դեպքում,
 - 9.1.2. Ապահովագրողի կողմից իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարման դեպքում:
 - 9.1.3. Պայմանագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից վճարում չկատարելու դեպքում
- 9.2. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարում է, եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով:
- 9.3. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է հետևյալ դեպքերում՝
 - 9.3.1. իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման կամ ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան դեպքում,
 - 9.3.2. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 9.4. Ֆիզիկական անձ հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու ապահովագրության պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ): Այդ դեպքում ապահովագրության պայմանագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ հաճախորդի կողմից ապահովագրության պայմանագիրը լուծելու մասին ընկերությանը ծանուցելու օրվան հաջորդող օրվանից: Ընդ որում, հաճախորդը ծանուցման հետ պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել վկայագրի բնօրինակը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված

Ապահովագրողի կողմից տրամադրած այլ փաստաթղթեր:

9.4.1. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

- 1) ապահովագրության պայմանագրի ժամկետը չի գերազանցում մեկ ամիսը, և (կամ) պայմանագրով նախատեսված ապահովագրությունը գործում է մինչև մեկ ամիս ժամկետով.
- 2) ապահովագրության պայմանագրի կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ հաճախորդը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

9.5. Ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարել Ապահովագրողի պահանջով ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

9.6. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին: Գրավոր ծանուցմանը պետք է կցվի նաև ապահովագրության պայմանագիրը: Ապահովագրության պայմանագիրը համարվում է դադարած Ապահովագրողի կողմից դիմումի ստացման օրվան հաջորդող 15-րդ օրվա 00:00, եթե ապահովագրության պայմանագրի դադարման ավելի ուշ ամսաթիվ դիմումի մեջ նշված չէ:

9.7. Ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով կնքված պայմանագրի և միանվագ վճարված ապահովագրավճարի պայմաններում, ինչպես նաև Պայմաններում կատարվող փոփոխությունների հետ համաձայն չլինելու հիմքով Ապահովադրի ցանկությամբ ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադիրին պայմանագրի գործողության ժամկետի չլրացած օրերի համար համամասնորեն հաշվարկված ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերով (ապահովագրավճարի 35%), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե ապահովագրության պայմանագրում այլ բան նախատեսված չէ:

Վերադարձման ենթակա ապահովագրավճարը հաշվարկվում է , հետևյալ բանաձևով՝

$$VU = \frac{(U - 35\% * U) * n}{N} - Z,$$

U՝ ապահովագրության պայմանագրով վճարված ապահովագրավճարը,

35%*U՝ Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերը,

n՝ ապահովագրության պայմանագրի գործողության ավարտին մնացած ամբողջական օրերի քանակ,

Z՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,

N՝ ամբողջական օրերի քանակը, որոնց ժամկետով կնքվել է ապահովագրության պայմանագիրը,

ՎԱ՝ վերադարձման ենթակա ապահովագրավճարը:

9.8. 9.7. կետում նշված հանգամանքներից տարբեր այլ հանգամանքներում ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում ապահովագրավճարը չի վերադարձվում:

9.9. Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ապահովագրական պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Պայմանագրում որպես SU-ի սեփականատեր նշված անձից տարբերվող այլ անձի անունով: Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1016-րդ հոդվածի 1-ին կետի: Նման հիմքի առաջացման դեպքում Ապահովադիրն այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնի Ապահովագրողին: Ընդ որում, Ապահովագրողը ապահովագրավճարի հաշվարկն իրականացնում է այդ մասին տեղեկանալու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:

- 9.10. Պայմանագրի լուծման դեպքում, Ապահովագրողի համաձայնությամբ, վերադարձման ենթակա ապահովագրավճարը կարող է ուղղվել Ապահովագրողի հետ այլ պայմանագրի ապահովագրավճարի վճարման՝ առանց 9.7. կետում նշված հաստատուն գործառնական ծախսերի (ապահովագրավճարի 35%) նվազեցման:
- 9.11. Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են փոխադարձ համաձայնությամբ ցանկացած պահի լուծել ապահովագրության պայմանագիրը:
- 9.12. Պայմաններում կատարվող փոփոխությունների հետ համաձայն չլինելու հիմքով Ապահովադիրի գրավոր պահանջով Պայմանագիրը ենթակա է անհապաղ լուծման:

10. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

10.1. Ապահովադիրը պարտավոր է Պայմանագրի կնքման պահին տվյալ օբյեկտի գծով այլ ապահովագրական ընկերությունների հետ կնքված ապահովագրության այն պայմանագրերի մասին, որոնք գործելու են Պայմանագրի հետ միաժամանակ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, ինչպես նաև նույն կերպ Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի կնքումից հետո կնքվելիք ապահովագրության նույնօրինակ պայմանագրերի մասին՝ դրանց կնքումից հետո անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում: Տվյալ ծանուցման մեջ պետք է նշված լինի վերոհիշյալ ապահովագրական ընկերության անվանումը, այդ ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրության պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրված ռիսկերը, ապահովագրական գումարը և չհատուցվող գումարը:

11. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

- 11.1. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի վրա հասնելու դեպքում, Ապահովադիրը/Շահառուն, կամ նրա ներկայացուցիչը, կամ Լիազորված վարորդ, կամ վարորդը պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր ողջամիտ և մատչելի միջոցները պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար, ՏՄ-ի հետագա վնասների կանխարգելման և լրացուցիչ վնասի առաջացմանը նպաստող պատճառների վերացման ուղղությամբ:
- 11.2. Ապահովագրված ՏՄ վնասման, ապահովագրված լրացուցիչ սարքավորման վնասման («Վնաս» և «Լրացուցիչ սարքավորում» ռիսկեր) Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր են.
 - 11.2.1. անհապաղ՝ ոչ ուշ քան 20 րոպեի ընթացքում, տեղեկացնել ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին՝ զանգահարելով ապահովագրական քարտի կամ պայմանագրի վրա նշված հեռախոսահամարով, և տվյալ պատահարով քննություն իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմնին, մասնավորապես՝
 - ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում՝ Ոստիկանության ՃՈ մարմիններին և հանձնել ակոստետ,
 - ապահովագրված ՏՄ-ի երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով վնասման, ապահովագրված ՏՄ-ի կամ դրա մասերի հափշտակության դեպքում՝ Ոստիկանության մոտակա բաժին,
 - տարերային աղետների դեպքում՝ Արտակարգ իրավիճակների նախարարություն,
 - հրդեհի դեպքում՝ Հրշեջ ծառայություն, և ապահովել ապահովագրական պատահարի փաստաթղթային ձևակերպումը:
 - 11.2.1.1. Սույն Պայմանների 12.2.1 կետում նշված պահանջից բացառություն են

կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին անհապաղ ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման (ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին տեղեկացվելու) դեպքում Ապահովադիրը կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պարտավոր են անհապաղ՝ ոչ ուշ քան 20 րոպեի ընթացքում, տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին հայտնել Ապահովագրողին:

11.2.1.2. Պայմանների 12.2.1. կետի համաձայն Ապահովագրողին զանգահարելու դեպքում Ապահովադիրը և/կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պետք է հայտնի ապահովագրական պատահարի վերաբերյալ նախնական տեղեկատվությունը, որը պետք է առնվազն պարունակի՝

11.2.1.2.1. Ապահովագրության պայմանագրի համարը,

11.2.1.2.2. տեղեկատվություն տրամադրելու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ ապահովադիրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) հայտնի ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝

- ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրը և ժամը,
- ապահովագրական պատահարի վայրը (ճշգրիտ հասցեն կամ հնարավորինս պարզ նկարագրությունը),
- ապահովագրական պատահարի մասնակիցների վերաբերյալ տվյալներ (առնվազն նրանց քանակը, հեռախոսահամարները, պատահարին մասնակից այլ ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը),
- ապահովագրական պատահարի համառոտ նկարագիրը, պատահարի հետևանքով պատճառված վնասների բնույթը, վնասի մոտավոր մեծությունը (հնարավորության դեպքում),

11.2.1.2.3. տեղեկատվություն պայմանների 11.2.5. կետում նշված հայտարարագիր կազմելու մասին համաձայնության առկայության կամ դրա բացակայության վերաբերյալ

11.2.2. Պատահարի պահին ՏՄ վարորդ հանդիսացած անձը /Ապահովադիր, լիազորված վարորդ/ պարտավոր է պատահարից հետո չլքել, չթողնել, չհեռանալ պատահարի վայրից, մինչև Ապահովագրողի ներկայացուցչի ժամանումը,

11.2.3. ՏՄ չտեղաշարժել՝ պահպանելով բոլոր վթարային հետքերը

ա. տեղաշարժել միայն Ապահովագրողի թույլտվությամբ

բ. իրավասու մարմինների պահանջով:

11.2.4. Եթե Ապահովագրողի ներկայացուցիչը հայտնում է իր՝ դեպքի վայր չժամանելու մասին, ապա Ապահովադիրը/Լիազորված վարորդը պետք է հետևի Ապահովագրողի ներկայացուցչի բանավոր ցուցումներին, իսկ դրանց բացակայության դեպքում դիմի պատահարի վերաբերյալ քննություն իրականացնելուն իրավասու համապատասխան պետական մարմին :

11.2.5. Ապահովադիրը կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը Ապահովագրողի համաձայնությունը ստանալու դեպքում լրացնում է գրավոր հայտարարագիր (այսուհետ Հայտարարագիր) և Ապահովագրողի ներկայացուցչի հետ

միասին ստորագրությամբ հաստատում այն, եթե ապահովագրական պատահարի արդյունքում տվյալ տրանսպորտային միջոցին պատճառված վնասի չափն իր գնահատականներով չի գերազանցում 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համաձայն է Ապահովագրողին չներկայացնել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը գերազանցող պահանջ, անկախ վնասի չափից, ինչպես նաև.

- տեղի ունեցած պատահարի հետ կապված հարուցված չէ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, կամ
- Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել միայն իր մասնակցությամբ

Սույն կետով նշված պահանջներին համաձայնելու դեպքում Ապահովադիրը /լիազորված վարորդը/ կարող է նաև Ապահովագրողին պատկանող 060-27-57-57 ձայնագրվող հեռախոսահամարով Ապահովագրողի համաձայնությունը ստանալու դեպքում լքել պատահարի վայրը: Այդ դեպքում հայտի կարգավորման ժամանակ հիմք են ընդունվում պատահարի վայրում կատարված լուսանկարները: 11.2.5 կետի պահանջներին բավարարելու դեպքում Ապահովագրողը չի պահանջում տվյալ պատահարի վերաբերյալ իրավասու /ճանապարհային ոստիկանության և այլ/ մարմնի եզրակացություն և հայտը կարգավորում է հայտարարագրի և/կամ հեռախոսագանգի միջոցով ձեռք բերված տեղեկատվության հիման վրա փորձագետի կողմից տրված պատահարի առաջացման պատճառի, ինչպես նաև վնասի չափի վերաբերյալ փորձագետների եզրակացության հիման վրա, որի պարագայում հատուցվող գումարը բոլոր դեպքերում չի կարող գերազանցել 200.000 ՀՀ դրամը:

- 11.2.6. 11.2.5 կետի պահանջներին Ապահովագրողի անհամաձայնության դեպքում հայտարարագիրը չի լրացվում և ապահովագրական պատահարի հետ կապված հարցերը կարգավորվում են Օրենքով և Պայմաններով սահմանված՝ վնասի չափը և մեղավորության աստիճանը որոշելու ընդհանուր պայմաններով :
- 11.2.7. ՃՏՊ դեպքում ապահովագրված ՏՄ վարորդը դեպքից հետո 24 ժամվա ընթացքում չպետք է օգտագործի ոգելից խմիչք, քանի որ Ապահովագրողը կարող է պահանջել սթափության վիճակի գնություն, նույնիսկ եթե վարորդն այն արդեն անցել է:
- 11.2.8. Հայտային դիմումը ներկայացնել պատահարից հետո 2 ամսվա ընթացքում (հայտային դիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը Ապահովագրողի կողմից հարգելի համարելու դեպքում գործը ենթակա է վերաբացման):
- 11.2.9. Հայտային դիմում ներկայացնելուց հետո, առավելագույնը երկու ամսվա ընթացքում, ներկայացված ապահովագրական հայտի կարգավորման համար Ապահովագրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը.
- 1) Պայմանագիրը,
 - 2) Ապահովագրողի մոտ Ապահովադիր/Շահառուի շահերի ներկայացման իրավունքը հաստատող լիազորագիր,
 - 3) Ապահովագրված ՏՄ գրանցման վկայագիր,
 - 4) ՃՏՊ պահին ՏՄ վարող անձի վարորդական վկայական,
 - 5) ՏՄ-ում առկա տեսաձայնագրման սարքի միջոցով կատարված վթարի տեսաձայնագրության տրամադրում, նման պահանջ պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը հասցվել է կայանված շահագործման մեջ չգտնվող ապահովագրված ՏՄ-ին, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցի պայթյունի կամ հրկիզման դեպքերի:
 - 6) Ճանապարհային երթուևկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կողմից կազմված արձանագրություն/եզրակացություն՝ ՃՏՊ-ի մեղավոր անձի նշումով, կամ.
 - 7) Միայն Ապահովագրողի հետ գրավոր կամ 060-27-57-57 ձայնագրվող հեռախոսահամարով նախապես համաձայնեցնելու դեպքում՝ ճանապարհային երթուևկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր

մարմնի կողմից կազմած արձանագրություն՝ ՃՏՊ-ի մասնակիցների կողմից վարույթից հրաժարվելու մասին՝ պատահարի բոլոր մասնակիցների բացատրություններով և ՃՏՊ վայրի սխեմա, կամ

- 8) Ապահովագրողի հետ սույն պայմաններով սահմանված կարգով կնքված հայտարարագիր, կամ
- 9) պատահարի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ՝ ՃՏՊ-ի մեղավոր անձի նշումով,

11.2.10. ՃՈ կողմից տրված եզրակացության, ինչպես նաև ներկայացված փորձագիտական եզրակացությունների հետ համաձայն չլինելու դեպքում, Ապահովագրական ընկերությունը նշանակում է կրկնակի փորձաքննություն:

11.2.11. Պատահարի դեպքում Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը չպետք է ընդունի որևէ պատասխանատվություն, չպետք է հանդես գա որևէ առաջարկով, պատահարի վերաբերյալ իրավասու մարմնի կողմից քննվող վարույթը դադարեցնելու միջնորդությամբ, խոստումով, կամ կատարի որևէ վճարում՝ առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության գալու և չպետք է գործի ի վնաս Ապահովագրողի շահերի, ինչպես նաև պետք է Ապահովագրողի՝ սույն պայմաններից բխող կամ այլ օրինական պահանջի դեպքում տրամադրի օժանդակություն:

11.2.12. Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է ՏՄ-ն և լրացուցիչ սարքավորումները ներկայացնել զննության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փորձաքննություն իրականացնելու համար:

11.2.13. Միևնույն ժամանակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ապահովագրական հատուցում ստանալու համար գրավոր դիմել.

- մեղավոր կողմի հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերություն
- ՀՀ Ավտոապահովագրողների Բյուրո այն դեպքում, երբ մեղավոր կողմը չունի գործող ԱՊՊԱ պայմանագիր:

11.2.14. Վնասված ՏՄ-ի զննման ժամը և տեղը համաձայնեցվում են կողմերի միջև:

11.2.15. ՃՏՊ-ի այլ մասնակիցների կամ ապահովագրված ՏՄ-ի վնասման համար մեղավոր անձանց առկայության դեպքում վնասված ապահովագրված ՏՄ-ի զննման տեղը և ժամը համաձայնեցվում են Ապահովագրողի և ՃՏՊ-ի մեղավոր կողմի ապահովագրական ընկերության միջև, ընդ որում զննման ամսաթիվը նշանակվում է՝ հաշվի առնելով այն ժամանակը, որն անհրաժեշտ է շահագրգիռ անձանց զննմանը կանչելու և ժամանելու համար:

11.3. Ապահովագրված ՏՄ առևանգման դեպքում (ոիսկ «Առևանգում») Ապահովադիրը պարտավոր է.

11.3.1. Ապահովադիրին, նրա ներկայացուցչին կամ վարորդին ապահովագրված ՏՄ-ի առևանգման մասին հայտնի դառնալուն պես անհապաղ հայտնել Ապահովագրողին և առևանգման վայրին մոտակա ոստիկանության բաժին:

11.3.2. Եթե ապահովագրված ՏՄ-ն ունի որոնման և հայտնաբերման համակարգ, անմիջապես ակտիվացնել այդ համակարգը և/կամ տեղեկացնել առևանգման մասին տվյալ համակարգը սպասարկող կազմակերպություն պայմանագրի պահանջներին համապատասխան

11.3.3. Երեք աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում՝ սահմանված Ապահովագրողի կողմից, ՏՄ-ի առևանգման վերաբերյալ իրեն հայտնի բոլոր հանգամանքների մանրամասն շարադրմամբ:

11.3.4. Ապահովագրական պատահարի մասին դիմումի քննության համար Ապահովագրողին ներկայացնել հետևյալը.

- 1) Ապահովագրության պայմանագիր,
- 2) Ապահովագրողի մոտ շահերը ներկայացնելու իրավունք տվող լիազորագիր (իրավաբանական անձի համար).

- 3) ՏՄ-ն վարելու և օգտագործելու իրավունք տվող բոլոր լիազորագրերը, ապահովագրված ՏՄ-ի գրանցման և հաշվառման փաստաթղթերը (գրանցման վկայականը, տրանսպորտային միջոցի անձնագիրը և այլն), ՃՏՊ պահին ՏՄ վարող անձի վարորդական վկայականը,
 - 4) Օրենքով համապատասխան դեպքը քննելու իրավասություն ունեցող պետական մարմնի (պաշտոնատար անձի) կողմից պատահարի կապակցությամբ քննվող գործով վերջնական որոշում՝ այդ թվում նաև կասեցման որոշում, կամ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ, որոնցում մասնավորապես նշված են.
 - առևանգման վայրը, ժամը, պատճառները, հանգամանքներն ու հետևանքները, ապահովագրված տրանսպորտային միջոցի նկարագրությունը (մակնիշը, մոդելը, գրանցման համարը),
 - առևանգմանը մասնակից անձանց, եթե դրանք հայտնաբերվել են, ամբողջական անուններն ու մշտական բնակության հասցեները (գտնվելու վայրը),
 - օրենքի նորմերը, որոնց հիման վրա հարուցվել է քրեական գործ գողության, կողոպուտի, ավազակության հատկանիշներով:
 - 5) Արտադրող գործարանի կողմից արտադրված բոլոր բանալիների հավաքածուները, հակաառևանգման, պահակային, որոնողական համակարգերի հեռակառավարման վահանակների (կախագարդերի, քարտերի, բանալիների) բոլոր հավաքածուները, որոնք կան ապահովագրված ՏՄ-ի վրա:
 - 6) Փաստաթղթեր (փաստաթուղթ), որոնք երաշխավորում են, որ ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրված գույքի հայտնաբերման դեպքում (այդ թվում պայմանագրի գործողության ավարտից հետո) այդ հատուցումը կամ ապահովագրված գույքը և բոլոր իրավունքները դրա նկատմամբ կանցնեն Ապահովագրողին: Այդպիսի փաստաթղթեր մասնավորապես կարող են լինել Ապահովագրողի կողմից ապահովագրված գույքի սեփականտիրոջ հետ կնքված համապատասխան անժամկետ պայմանագրերը (համաձայնագրերը), ինչպես նաև ապահովագրված ՏՄ-ի սեփականատիրոջ գրավոր պարտավորությունները:
- 11.4. 11.3.4 կետի 3) և 5) ենթակետերում նշված Ապահովագրողին փոխանցված փաստաթղթերը և պարագաները վերադարձվում են Ապահովադրին՝ ՏՄ-ի հայտնաբերման և Ապահովադրի կողմից, որպես ապահովագրական հատուցում ստացած գումարի վերադարձից հետո:
- 11.5. Ապահովադրի կամ լիազոր տիրապետողի կողմից Պայմանագրի 11.2-11.2.15. կետերով նախատեսված պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հանդիսանում է ապահովագրական հատուցման մերժման հիմք:

12. ՎՆԱՍԻ ՉՍՓԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՉՍՓԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 12.1. Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին ապահովագրական պատահարի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումից, Ապահովագրողի կողմից վնասված ՏՄ-ի զննումից և զննման արձանագրության կազմումից, պատճառների, հանգամանքների, հասցված վնասի չափի և բնույթի որոշումից և Ապահովագրողի կողմից դեպքը ապահովագրական պատահար ճանաչելուց հետո: Ընդ որում, ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության ի հայտ գալու պատճառները և վնասի չափը հիմնավորող փաստաթղթերի տրամադրման պարտականությունը դրված է Ապահովադրի վրա:
- 12.1.1. Բոլոր ապահովագրական պատահարների համար ապահովագրական հատուցման չափը, ներառյալ լրացուցիչ ծախսերը, չպետք է գերազանցի Պայմանագրով և/կամ դրան կից լրացուցիչ համաձայնագրով սահմանված ապահովագրական գումարը:

- 12.1.2. Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել SU-ի շուկայական արժեքը:
- 12.1.3. Պայմանագրով սահմանված լրացուցիչ սարքավորումների ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված ապահովագրական գումարը:
- 12.1.4. Յուրաքանչյուր ապահովագրական հատուցում վճարելուց հետո ապահովագրական գումարը համապատասխան օբյեկտի համար նվազեցվում է ապահովագրական գումարից կատարված հատուցման չափով, եթե Պայմանագրով այլ բան սահմանված չէ: Հետագա հատուցումները կիրականացվեն SU-ի շուկայական արժեքի և մնացորդային ապահովագրական գումարի համամասնությամբ:
- 12.1.5. Ապահովագրական հատուցում ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի վերականգնել ապահովագրության վկայագրում նշված ապահովագրական գումարի նախկին/սկզբնական չափը Պայմանագրի գործողության ընթացքում՝ լրավճարելով համապատասխան չափի ապահովագրավճար վկայագրի չլացած օրերի համար, որից հետո իրականացվելիք հատուցումների վրա չի կիրառվի համամասնությունը:
- 12.2. Պայմանագրին և սույն Պայմաններին համապատասխան Ապահովադրի կողմից Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության առաջացումը հաստատող փաստերի, պատճառների և վնասի չափի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից հետո Ապահովագրողը կայացնում է Ապահովագրական հատուցման վճարման/մասնակի վճարման կամ վճարումը մերժելու մասին որոշում առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 12.3. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Պայմանագրով Ապահովագրողի հաշվարկային հաշվին ապահովագրավճարի փոխանցումից ոչ շուտ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ եթե Ապահովագրողն իր հայեցողությամբ որոշում չի կայացրել վճարման մասին:
 - Եթե այլ ժամկետներ նախատեսված չեն ապահովագրության պայմանագրով, Ապահովագրական հատուցումն իրականացվում է.
 - 12.3.1. Ապահովագրված SU-ի առևանգման դեպքում՝ Ապահովադրի կողմից Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման և առևանգված ապահովագրված SU-ի գտնվելու դեպքում կողմերի փոխհարաբերությունների վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի ստորագրման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:
 - 12.3.2. Բոլոր մնացած դեպքերում՝ հայտի կարգավորման որոշման հաստատման օրվանից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 12.4. Դեպքն ապահովագրական պատահար ճանաչելու և ապահովագրական հատուցում կատարելու հիմք են հանդիսանում սույն Պայմանների 11-րդ կետում նշված Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրվող փաստաթղթերը:
- 12.5. Ապահովագրված SU-ի առևանգման կամ ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցման վճարումը SU-ի սեփականատեր չհանդիսացող Ապահովադրին (Շահառուին) իրականացվում է ապահովագրված SU-ի սեփականատիրոջ կողմից նոտարական կարգով վավերացված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք տրամադրող լիազորագրի առկայության դեպքում:
- 12.6. Ապահովագրության պայմանագրում ռիսկի գծով ֆրանշիզայի առկայության դեպքում այն հանվում է ապահովագրական հատուցումից այդ ռիսկի գծով:
- 12.7. Առևանգված SU-ի համար ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է սույն Պայմանների 11.3.4 կետում նշված բոլոր փաստաթղթերի և առարկաների Ապահովագրողին փոխանցելուց հետո:
- 12.8. **Ավտոտրանսպորտային միջոցին պատճառված գույքային վնասների գնահատման և վնասի վերականգնման գործընթացը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, կատարվում է հետևյալ կարգով՝**
 - 12.8.1. Եթե տեխնիկապես հնարավոր է և տնտեսապես հիմնավորված (վերանորոգման ծախսերը

չեն գերազանցում տվյալ դետալի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի որևէ դետալ կամ հանգույց վերականգնել, ապա պատճառված վնասի չափի մեջ փորձագետը հաշվարկում է այդ դետալի կամ հանգույցի վերանորոգման ծախսերը, իսկ լիազոր անձի կողմից ապահովագրական հատուցման վերանորոգման տարբերակը ընտրելու դեպքում՝ վերանորոգող կազմակերպության կողմից այն վերանորոգվում է: Եթե տեխնիկապես հնարավոր չէ կամ տնտեսապես հիմնավորված չէ (վերանորոգման ծախսերը գերազանցում են տվյալ դետալի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի որևէ դետալ կամ հանգույց վերականգնել, ապա.

12.8.1.1. մինչև 60.000 կիլոմետր վազք ունեցող՝ մինչև երեք (ներառյալ) տարվա բացառապես ԱՊՀ երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների և մինչև 120.000 կիլոմետր վազք ունեցող՝ մինչև հինգ տարվա արտադրության ԱՊՀ երկրներից բացի այլ երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների համար վնասված և փոխարինման ենթակա հանգույցները կամ դետալները փոխարինվում են գործարանային արտադրության նոր հանգույցներով կամ դետալներով, իսկ փորձագետի կողմից կատարված գույքային վնասի հաշվարկման հիմքում արտացոլվում են դրանց՝ ՀՀ և ԼՂՀ շուկայում առկա նվազագույն արժեքը՝ առանց որևէ մաշվածություն մասհանելու: Ընդ որում, գործարանային են համարվում ոչ միայն տվյալ մակնիշի SU-ի պաշտոնական ներկայացուցչի ներկրած և վերջինիս կողմից վաճառվող, այլ նաև այլ ներկրողների կողմից ներկրված պահեստամասերը և ագրեգատները, անկախ ներկրման երկրից:

12.8.1.2. Երեքից ավելի տարվա կամ 60.000 կիլոմետրից ավել վազք ունեցող, բացառապես ԱՊՀ երկրներում կամ նախկին Խորհրդային Միության երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների, ինչպես նաև հինգից ավելի տարվա տարիք կամ 120.000 կիլոմետրից ավելի վազք ունեցող ԱՊՀ և նախկին Խորհրդային միության երկրներից բացի այլ երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված վնասի գնահատման հիմքում դրվում են համանման օգտագործված կամ դրա բացակայության դեպքում ոչ գործարանային արտադրության դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման և տեղադրման արժեքը, իսկ տուժողի կողմից ապահովագրական հատուցման վերանորոգման տարբերակը ընտրելու դեպքում՝ վերանորոգող կազմակերպության կողմից ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրվում է համանման օգտագործված կամ դրա բացակայության դեպքում ոչ գործարանային արտադրության դետալ: Համանման օգտագործված կամ ոչ գործարանային պահեստամասերի կամ ագրեգատների բացակայության և պատվիրելու միջոցով ներկրելու /այդ թվում՝ այլ երկրից/ անհնարինության դեպքում միայն կարող է հաշվարկվել գործարանային նոր դետալի՝ ՀՀ և ԼՂՀ շուկայում առկա նվազագույն արժեքը՝ մասհանելով համապատասխան մաշվածությունը: Ընդ որում՝ ապահովագրողը պատասխանատվություն չի կրում պահեստամասերը կամ ագրեգատները պատվիրելու միջոցով այլ երկրից ներկրելու համար անհրաժեշտ ժամկետի հետևանքով ապահովագրի կողմից SU-ն չշահագործելու պատճառով բաց թողնված օգուտների համար:

12.9. «Վնաս» ոիսկի գծով ապահովագրված SU-ի վնասման դեպքում վնասի չափը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$V = ((P - M\%) + A) * L$$

որտեղ՝

V - ՏՄ-ին պատճառված վնասի մեծությունն է՝ հաշվարկված վնասի գնահատման ծախսային մեթոդով,

P - ՏՄ-ի վնասված և փոխարինման ենթակա դետալների (ագրեգատների) շուկայական արժեքն է՝

A - ՏՄ-ի վերանորոգման աշխատանքների և դրա ընթացքում օգտագործվող նյութերի շուկայական արժեքն է,

L - ճշգրտող գործակից է, որի կիրառման միջոցով չնախատեսված (ոչ ակնհայտ) ծախսերը ներառվում են վնասի ընդահանուր մեծությունում

M - փոխարինվող դետալի մաշվածության գործակիցը, որը կախված է ՏՄ-ի տեսակից, տարիքից և վազքից՝ համաձայն աղյուսակ 1-ի և 2-ի,

Աղյուսակ 1.

ԱՊՀ և նախկին Խորհրդային Միության երկրներից բացի այլ երկրներում արտադրված տրանսպորտային միջոցներին պատճառված վնասների հաշվարկում կիրառվող մաշվածության տոկոսները՝ ըստ տրանսպորտային միջոցի տարիքի և վազքի մեծության:

| Վազք (հազ. կմ) | Տրանսպորտային միջոցի տարիքը (տարի) | | | | | |
|-------------------|------------------------------------|-----|----|-----|------|------------|
| | 0-2 | 3-4 | 5 | 6-8 | 9-10 | 11 և ավելի |
| 0-40 | Չի կիրառվում | | | 17 | 21 | 24 |
| 40-80 | | | | 20 | 23 | 27 |
| 80-120 | | | | 24 | 28 | 30 |
| 120-140 | 18 | 22 | 24 | 27 | 29 | 31 |
| 140-160 | 20 | 23 | 26 | 28 | 29 | 32 |
| 160-180 | 22 | 26 | 27 | 30 | 31 | 33 |
| 180-200 | 24 | 27 | 29 | 31 | 32 | 33 |
| 200-250 | 25 | 28 | 30 | 32 | 33 | 35 |
| 250-350 | 32 | 33 | 36 | 38 | 38 | 40 |
| 350-ից ավելի | 40 | 42 | 44 | 46 | 46 | 47 |

Աղյուսակ 2.

ԱՊՀ և նախկին Խորհրդային Միության երկրներում արտադրված տրանսպորտային միջոցներին պատճառված վնասների հաշվարկում կիրառվող մաշվածության տոկոսները՝ ըստ տրանսպորտային միջոցի տարիքի և վազքի մեծության:

| Վազք (հազ. կմ) | Տրանսպորտային միջոցի տարիքը (տարի) | | | | | |
|-------------------|------------------------------------|------|-------|-------|------------|----|
| | 0-3 | 4-10 | 11-14 | 15-19 | 20 և ավելի | |
| 0-60 | Չի կիրառվում | | 6 | 11 | 13 | 16 |
| 60-100 | 5 | 8 | 12 | 14 | 20 | |
| 100-150 | 6 | 9 | 13 | 15 | 23 | |
| 150-200 | 9 | 11 | 13 | 16 | 25 | |
| 200-300 | 10 | 12 | 14 | 17 | 27 | |

| | | | | | |
|-----------------|----|----|----|----|----|
| 300-ից ավելի | 12 | 13 | 15 | 18 | 30 |
|-----------------|----|----|----|----|----|

- 12.10. Ապահովագրողը և Ապահովադիրը կարող են համաձայնության գալ պատահարի հետևանքով պատճառված վնասը վերականգնել՝ վերանորոգելով ապահովագրված SU-ն Ապահովագրողի գործընկեր սպասարկման կենտրոնում և վնասի գնահատման ժամանակ հիմք ընդունել սույն պայմաններով սահմանված գնահատման կանոններին չհակասող, վերանորոգող կազմակերպության կողմից տրված հաշիվ-ապրանքագրերը:
- 12.11. Ապահովագրողը հատուցում է թաքնված վնասների և թերությունների վերացման հետ կապված ծախսերը, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի արդյունքում, հայտնաբերվել SU-ի վերանորոգման ժամանակ և հաստատվել են Ապահովագրողի կողմից գնահատման ակտով:
- 12.12. Ապահովագրողը յուրաքանչյուր պատահարով 1 անգամ, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, հատուցում է պատահարի հետևանքով SU-ի սեփական ընթացքով տեղափոխման անհնարինության պատճառով մինչև կայանման վայր կամ վերանորոգող կազմակերպություն տեղափոխելու հետ կապված ծախսերը հետևյալ չափերով.
- 12.12.1. Երևան քաղաքի, կամ ՀՀ մարզերից յուրաքանչյուրի կամ ԼՂՀ-ի սահմաններում՝ մինչև 8000 դրամի չափով.
- 12.12.2. ՀՀ մարզերից կամ ԼՂՀ-ից Երևան քաղաք կամ ՀՀ այլ մարզ տեղափոխելու դեպքում՝ մինչև 20.000 դրամի չափով:
- 12.13. Թաքնված վնասների և թերությունների հայտնաբերման դեպքում Ապահովադիրը մինչև դրանց վերացումը պարտավոր է գրավոր ծանուցել այդ մասին Ապահովագրողին նրա կողմից լրացուցիչ գնման արձանագրություն կազմելու համար:
- 12.14. Հատուցման ենթակա չեն հետևյալ ծախսերը.
- 12.14.1. SU-ի տեխնիկական և երաշխիքային սպասարկման,
- 12.14.2. SU-ի ձևավորման և վերասարքավորման, նրա առանձին մասերի և հանգույցների մաշվածության պատճառով փոխարինման և վերանորոգման, տեխնիկական թերության և այլնի, ինչպես նաև դրանց հետ կապված աշխատանքների ծախսերը,
- 12.14.3. Ապահովագրական պատահարից բացի այլ պատճառով SU-ի սեփական ընթացքով տեղափոխելու անհնարինության դեպքում մինչև կայանման վայր կամ վերանորոգող կազմակերպություն տեղափոխելու հետ կապված ծախսերը:
- 12.15. **SU-ի լրիվ, փաստացի կամ կոնստրուկտիվ ոչնչացման դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ SU-ի վերանորոգման արժեքը գերազանցում է պատահարին նախորդող պահին նրա շուկայական արժեքի 80%-ը, ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է «Լրիվ ոչնչացում» պայմաններով:**
- 12.16. «Լրիվ ոչնչացում» պայմաններով կարգավորման դեպքում վնասի գնահատումը կատարվում է հետևյալ մեթոդով
- 12.16.1. Վնասի մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.
- $$V_m = V_n - V_h, \text{ որտեղ}$$
- V_m ՝ ավտոտրանսպորտին պատճառված վնասի մեծությունն է՝ հաշվարկված վնասի գնահատման մնացորդային մեթոդով,
- V_n ՝ նախքան պատահարը ավտոտրանսպորտի շուկայական արժեքն է՝ գնահատման ներկայացված օրվա դրությամբ,
- V_h ՝ ավտոտրանսպորտի մնացորդային արժեքն է՝ գնահատման ներկայացված օրվա դրությամբ:

$$V_h = (1 - K_a) * V_n * \sum_{i=1}^{17} C_i$$

K_a ՝ գործակից է, որն արտացոլում է ավտոտրանսպորտի մասերի (դետալների, ագրեգատների, հանգույցների) ապամոնտաժման, փորձարկման, պահպանման և վաճառքի հետ կապված ծախսերի մեծությունը ($K_a = 0.5$),

V_n ՝ մինչև վնասվելը ավտոտրանսպորտի շուկայական արժեքն է՝ ՀՀ դրամով,

C_j ՝ ավտոտրանսպորտի պիտանի մասերի (դետալների, ագրեգատների, հանգույցների) շուկայական արժեքի տեսակարար կշիռն է մինչև վնասվելը ավտոտրանսպորտի արժեքի նկատմամբ, որոնց հստակ չափերը վնասվածության աստիճանից ելնելով ինքնուրույնաբար որոշում է փորձագետը,

i - ավտոտրանսպորտի մասերի (դետալ, ագրեգատ, հանգույց) տեսակները սահմանված են աղյուսակով:

| | Հանգույցի, ագրեգատի անվանումը | Տեսակարար կշիռ | Զննվողմեքենայի համար |
|------|--|----------------|----------------------|
| 1 | Սրահ | 18 | - |
| 1.1. | Ղեկանիվ (անվտանգության բարձիկով) և լրացուցիչ սարքերի վահանակ լրակազմ (անվտանգության բարձիկով) | 8 | - |
| 1.2. | Սրահի այլ դետալներ և հանգույցներ | 10 | - |
| 2 | Թափքի կմախք (հատակի շեմ, կանգնակներ, տանիք, դիմապակի, հետնապակի) | 13 | - |
| 3 | Առջևի ձախ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի ձախ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի ձախ սարքավորումներ | 3 | - |
| 4 | Առջևի աջ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի աջ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի աջ սարքավորումներ | 3 | - |

| | | | |
|------|---|---------|---|
| 5 | Շարժիչի ծածկոց, ջերմափոխանակիչի շրջանակ, ջերմափոխանակիչի շրջանակի կախովի տարրեր, դիմացի թափարգել | 2,5 | - |
| 6 | Ետևի ձախ անվաթև (կողամաս), ետևի ձախ անվակամար, լուսավորության՝ ետևի ձախ սարքավորումներ | 2(2.5)* | - |
| 7 | Ետևի աջ անվաթև (կողամաս), ետևի աջ անվակամար, լուսավորության՝ ետևի աջ սարքավորումներ | 2(2.5)* | - |
| 8 | Բեռնախցիկի ծածկոց (ետևի դուռ), բեռնախցիկի հատակ՝ իր երկայնահեծաններով, ետևի լայնական վահանակ՝ իր կախովի դետալներով, բեռնախցիկի պաստառներ, ետևի թափարգել | 2,5 | - |
| 9 | Դռներ (իրենց լրակազմ դետալներով) | 4(2)* | - |
| 10 | Շարժիչ (իր կցորդիչով և կախովի սարքավորումներով) | 16 | - |
| 10,1 | Շարժիչ (իր կցորդիչով՝ առանց կախովի սարքավորումների) | 10 | - |
| 11 | Մեխանիկական (ավտոմատ) փոխանցման տուփ | 7(8) | - |
| 12 | Առջևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնականհեծան) | 10(8)** | - |
| 13 | Ղեկային կառավարման մեխանիզմ | 2 | - |
| 14 | Ետևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնականհեծան, ետևի կամրջակ) | 8(10)** | - |

| | | | |
|------|--|-----------|---|
| 14,1 | Կախոց՝ իր լրակազմ դետալներով լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնական հեծան, ետևի կամրջակ) | 18(9+9)** | - |
| 15 | Բաժանարար փոխանցման տուփ | 2 | - |
| 16 | Ջերմափոխանակիչներ (ջրի, յուղի, օդորակիչի և այլն), վառելիքի, ջրի բաքեր, գազերի արտանետման համակարգ | 2 | - |
| 17 | Սույն աղյուսակի 1-16-րդ կետերում չնշված այլ մասեր (դետալ, հանգույց, ագրեգատ) | 3 | - |
| | Ընդհամենը | 100 | |

(...)*- երկդռնանի ավտոտրանսպորտային միջոցների համար,

(...)**- ետևի քարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար,

(...)**- լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար աղյուսակում նշված 12-րդ և 14-րդ կետերի փոխարեն կիրառվում է միայն 14.1-րդ կետը, իսկ ոչ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար կիրառվում են համապատասխանաբար 12-րդ և 14-րդ կետերը՝ 15-րդ կետը ընդունելով 0 %:

12.17. «Լրիվ ոչնչացում» պայմաններով պահանջի կարգավորման մասին որոշման ընդունման համար Ապահովագրողն անհրաժեշտության դեպքում անց է կացնում վերանորոգման արժեքի նախնական գնահատում:

12.18. Նախնական գնահատումն իրականացվում է վնասված SU-ի գնման հիման վրա, որը կատարվել է Ապահովագրողի համապատասխան աշխատակցի կողմից, ինչպես նաև Ապահովագրողի կողմից հաշվարկված SU-ի վերանորոգման արժեքի հաշվարկման հիման վրա:

12.19. Ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ հաշվի չի առնվում բացակայող կամ վնասված դետալների կամ ագրեգատների արժեքը, որոնց բացակայությունը կամ վնասվելը ուղիղ կապ չունի դիտարկվող ապահովագրական պատահարի հետ:

12.20. Առնանգված SU-ի համար ապահովագրական հատուցման վճարման դեպքում կամ «Վնաս» ռիսկի գծով «Լրիվ ոչնչացում» պայմանների հիման վրա ապահովագրական հատուցման վճարման դեպքում ապահովագրավճարի վերադարձն ապահովագրական մյուս ռիսկերի գծով չի կատարվում:

12.21. «Վնաս» ռիսկի գծով ապահովագրական հատուցման վճարումից հետո, բացի «Լրիվ ոչնչացում» պայմանների հիման վրա վճարման դեպքի, ապահովագրության պայմանագիրը այդ ռիսկի գծով շարունակում է գործել մինչև նրա գործողության ժամկետի ավարտը: Ընդ որում՝ ապահովագրական գումարը ռիսկի գծով նվազում է ապահովագրական հատուցման գումարի չափով:

12.22. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով Վնասի չափը որոշվում է.

- Սույն պայմաններով գույքային վնասների գնահատման և վնասի վերականգնման

գործընթացի համար նախատեսված դրույթների համաձայն:

➤ «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրական գումարի սահմաններում:

- 12.22.1. Առևանգված կամ ոչնչացված լրացուցիչ սարքավորման դիմաց ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրության պայմանագրի գործողությունը դրա նկատմամբ դադարում է:
- 12.22.2. Առջևի շարժական պանելով ապահովագրված ավտոմագնիտոլայի առևանգման դեպքում ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին առևանգված մագնիտոլայից մնացած առջևի շարժական պանելի հանձնելուց հետո:
- 12.23. Ապահովագրական հատուցման վճարումը և բոլոր ռիսկերի գծով ապահովումն իրականացվում է ՀՀ դրամով:
- 12.24. Պայմանների 11.2.5. կետով նախատեսված կարգով Հայտարարագիր լրացնելու դեպքում Ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել 200.000 /Երկու հարյուր հազար/ ՀՀ դրամը:
- 12.25. Ֆիզիկական անձ հաճախորդը իրավունք չունի պահանջելու ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում.
 - 1) մտածելու ժամանակի ընթացքում պատահարի մասին նա չի ծանուցել ապահովագրական ընկերությանը,
 - 2) եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ հաճախորդը մինչև մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է ապահովագրական ընկերությանը պայմանագիրը լուծելու մասին:

13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒԹՅՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

- 13.1.1. Ստանալ ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի կամ պատասխանատվության սահմանաչափի սահմաններում, եթե շահառուն այլ անձ չէ:
- 13.1.2. Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում նշված վարելու լիազորություն ունեցող անձանց ցուցակում փոփոխություն մտցնել: Նման փոփոխությունը կատարելու համար Ապահովադիրը պետք է փոփոխություն կատարելու ենթադրվող օրվան նախորդող ոչ պակաս, քան 3 օր առաջ գրավոր դիմում ներկայացնի Ապահովագրողին, որը հանդիսանում է ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը: Այդ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լրացուցիչ ապահովագրավճարի վճարում ռիսկի մեծացման համար:
- 13.1.3. Փոխարինել ապահովագրության պայմանագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ այդ մասին ոչ ուշ, քան 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա արդեն կատարել է Պայմանագրով որևէ պարտականություն կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու մասին պահանջ:
- 13.1.4. Ապահովագրության պայմանագրի կորստի, վնասման կամ ոչնչացման դեպքում պահանջելու պայմանագրի կրկնօրինակը: Կրկնօրինակի ստացումից հետո կորած ապահովագրական պայմանագիրը համարվում է անվավեր և դրա հետ կապված վճարումներ չեն իրականացվում:

13.2. Ապահովադիրը պարտավոր է՝

- 13.2.1. Ապահովագրության պայմանագրի կնքման, դրա վերակնքման, ապահովագրության պայմանների փոփոխման ժամանակ, ինչպես նաև ապահովագրության պայմանագրի

կնքման ժամանակ առկա SU վնասների վերացման դեպքում SU-ն տրամադրել Ապահովագրողին զննման և/կամ լուսանկարման համար: Ապահովագրողը գրառում է կատարում ապահովագրության պայմանագրում վնասների վերացման վերաբերյալ: Վերանորոգված SU-ն կրկնակի զննման չներկայացնելու դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք նշված են եղել վնասված ապահովագրված SU-ի ապահովագրության դիմումի կամ զննման արձանագրության (SU նկարագրություն) մեջ: Պարտադիր չի համարվում վերանորոգված SU-ն Ապահովագրողի կողմից կրկնակի զննման ուղարկելը, եթե վնասված ապահովագրված SU-ն վերականգնվել է Ապահովագրողի գործընկեր տեխնիկական սպասարկման կենտրոնում, ինչպես նաև պայմանագրի արտոնյալ ժամկետի ընթացքում հերթական շրջանի երկարացման դեպքում:

- 13.2.2. Ապահովագրության պայմանագրում և սույն Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,
- 13.2.3. Երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին SU-ը ճՈ հաշվառումից հանելու, գրանցման փաստաթղթերի, գրանցման համարանիշների փոփոխման մասին այդ փոփոխությունները ապահովագրության պայմանագրում ներառելու համար:
- 13.2.4. Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրված SU պահպանել սարքին վիճակում, ձեռնարկել նախազգուշական միջոցառումներ ապահովագրված SU-ին, վարորդի և ուղևորների կյանքին և առողջությանը վնասի պատճառման կանխարգելման ուղղությամբ:
- 13.2.5. Ապահովագրության պայմանագրի կնքումից անմիջապես հետո տեղեկացնել Շահառուին կամ ապահովագրության պայմանագրով ապահովագրված SU վարելու լիազորություն ունեցող անձանց ապահովագրության սույն Պայմանների և ապահովագրության պահանջների մասին:
- 13.2.6. Կատարել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջները և տրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության /ԱՊՊԱ/ Պայմանների պահանջները:
- 13.2.7. Ամբողջ ծավալով կատարել ապահովագրության պայմանագրի և ապահովագրության սույն Պայմանների պահանջները. Շահառուի կամ Պայմանագրով ապահովագրված SU վարելու լիազորություն ունեցող անձանց կողմից ապահովագրության պայմանագրի և ապահովագրության սույն Պայմանների խախտումը դիտարկվում է որպես սույն Պայմանների խախտում Ապահովագրողի կողմից:
- 13.2.8. Անհապաղ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, եթե առևանգված ապահովագրված SU-ն գտնվել ու վերադարձվել է Ապահովագրողին, կամ եթե Ապահովագրողին հայտնի է դարձել առևանգված ապահովագրված SU գտնվելու վայրը:
- 13.2.9. Եթե առևանգված ապահովագրված SU գտնվել և վերադարձվել է Ապահովագրողին, մեկ ամսվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել ստացած ապահովագրական հատուցումը առևանգված SU-ի դիմաց:
- 13.2.10. Անհապաղ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այն մասին, որ պատճառված վնասն ամբողջությամբ կամ մասնակի հատուցվել է մեղավոր անձի կողմից:
- 13.2.11. Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումն ամբողջ ծավալով կամ մասնակի, եթե ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների ընթացքում հայտնաբերվել են հանգամանքներ, որոնք օրենքով և սույն ապահովագրության Պայմանների համաձայն ամբողջությամբ կամ մասնակիորեն գրկում են Ապահովագրողին (Շահառուին) ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:
- 13.2.12. Չթողնել հաշվառման փաստաթղթերը (SU գրանցման վկայականը և SU անձնագիրը), SU

բանալիների և հակաառևանգման համակարգերի կախազարդերը ապահովագրված SU-ում:

- 13.2.13. Ապահովագրողի պահանջով հանձնել նրան ապահովագրված SU-ի վերանորոգման ընթացքում փոխարինված վնասված դետալներն ու հանգույցները:
 - 13.2.14. Աշխատանքային վիճակում պահել SU որոնողական և հայտնաբերման համակարգերը: Այդ թվում անցկացնել այդ համակարգերի փորձարկում, վճարել որոնողական համակարգերի օպերատորների ծառայությունները:
 - 13.2.15. Լքելով SU-ն՝ փակել դրա բոլոր դռները, բեռնախցիկը և օգտագործել (գործի դնել) SU վրա տեղադրված բոլոր հակաառևանգման համակարգերը:
 - 13.2.16. SU-ն շահագործել միայն տվյալ եղանակային և ճանապարհային պայմաններին համապատասխանող անվադողերով, այդ թվում՝ ձմռանը (դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսներին) կամ ճանապարհաձածկույթին ձյան կամ մերկասառույցի առկայության պայմաններում SU-ն շահագործել բացառապես ձմեռային անվադողերով : Ընդ որում, սույն պայմանների համաձայն ձմեռային անվադողեր չեն կարող համարվել ունիվերսալ /M+S կամ ստանդարտներով դրան հավասարեցված նշագրում ունեցող՝ *всесезонные*/ անվադողերը:
 - 13.2.17. Պատահարից հետո մինչև հայտի կարգավորումը չվերանորոգել SU-ն, պահպանել դրա վրա առկա բոլոր վթարային հետքերը և SU-ն ներկայացնել Ապահովագրողին հետվթարային վիճակի նույնությամբ:
 - 13.2.18. Ապահովագրական հատուցում ստանալուց և ապահովագրված SU-ի վերանորոգումից հետո SU-ն ներկայացնել Ապահովագրողին՝ SU-ի լուսանկարահանման համար, հակառակ դեպքում նախորդ պատահարներից արդեն իսկ առկա վնասված հատվածներին/դետալներին պատճառված վնասը ապահովագրական պատահար չի համարվում և դրա վերականգնման համար Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում :
- 13.3. Ապահովագրողն իրավունք ունի՝
- 13.3.1. Մտուզել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները:
 - 13.3.2. Պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխում կամ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում, եթե նրան հայտնի է դարձել կամ եթե նա տեղեկացվել է Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների մասին (ապահովագրության սույն Պայմանների 16. և 14.2. կետեր),
 - 13.3.3. Ապահովագրված SU-ին պատճառված վնասի հանգամանքները, պատճառները, չափը և բնույթը պարզելու համար Ապահովագրողն իրավունք ունի ուղարկել հարցումներ համապատասխան իրավասու մարմիններ և այլ Ապահովագրական ընկերություններ, որոնք կարող են տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:
 - 13.3.4. Ապահովադրից, Շահառուից կամ SU վարելու լիազորություն ունեցող անձից պահանջել ապահովագրական պատահարի և դրա առաջացման հանգամանքների հաստատման համար անհրաժեշտ տեղեկություններ,
 - 13.3.5. Անցկացնել վնասված SU զննում և քննություն,
 - 13.3.6. Հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը ապահովագրական պատահարի բոլոր հանգամանքները պարզելու համար (այդ թվում մինչև իրավասու մարմիններ ուղարկված հարցումներին պատասխան ստանալը)՝ Ապահովադրին գրավոր տեղեկացնելով այդ մասին:
 - 13.3.7. Վաղաժամկետ լուծել ապահովագրության պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովադրի, Շահառուի կամ ապահովագրության պայմանագրով ապահովագրված SU վարելու լիազորություն ունեցող անձանց կողմից ապահովագրության պայմանագրի պայմանների խախտման դեպքում՝ խախտումը

հայտնաբերելու պահից 3-ամսյա ժամկետի ընթացքում:

- 13.3.8. Մերժել Ապահովադրին ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ հիմքերից որևէ մեկի առակայության դեպքերում՝
 - 13.3.8.1. Ապահովադրի/Շահառուի կողմից պատահարի վերաբերյալ քննություն իրականացնող իրավասու մարմնին կամ Ապահովագրողին կեղծ՝ իրականությանը չհամապատասխանող, կամ անարժանահավատ տեղեկությունների կամ կեղծ փաստաթղթերի տրամադրման դեպքում,
 - 13.3.8.2. Պատահարում մեղավոր անձի կամ վերջինիս պատասխանատվությունը ապահովագրած ապահովագրական ընկերության կողմից Ապահովադրին/Շահառուին տվյալ պատահարի շրջանակներում հատուցում տրամադրելու դեպքում՝ հատուցված արժեքի չափով,
 - 13.3.8.3. Ապահովագրության պայմանագիրը և/կամ ապահովագրության սույն Պայմանները Ապահովադրի/Շահառուի կամ ապահովագրված ՏՄ-ն վարելու լիազորություն ունեցող անձի կողմից խախտելու դեպքում,
 - 13.3.8.4. Ապահովադրի/Շահառուի կողմից պատահարից հետո երկամսյա ժամկետում հայտային դիմում չներկայացնելու կամ ներկայացնելուց հետո երկամսյա ժամկետում պահանջվող բոլոր փաստաթղթերը չներկայացնելու դեպքում,
 - 13.3.8.5. Ապահովագրված ՏՄ-ն ոչ լիազորված տիրապետողի կողմից շահագործելու դեպքում,
 - 13.3.8.6. Օրենքով և սույն Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:
- 13.3.9. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել մերժման այլ հիմքեր:
- 13.4. Ապահովագրողը պարտավոր է.
 - 13.4.1. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմանների հետ և հանձնել նրան մեկ օրինակ:
 - 13.4.2. Դեպքը ապահովագրական պատահար ճանաչելու դեպքում կատարել ապահովագրական հատուցման վճարում ապահովագրության սույն Պայմանների 12.3. կետում նշված ժամկետներում:
 - 13.4.3. Գրավոր տեղեկացնել Ապահովադրին (Շահառուին) դեպքը ապահովագրական պատահար չճանաչելու կամ ապահովագրական հատուցման չափը նվազեցնելու վերաբերյալ՝ բացատրելով նման որոշման կայացման պատճառները:
 - 13.4.4. Չհրապարակել տեղեկություններ Ապահովադրի, Շահառուի մասին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
 - 13.4.5. Ապահովադրին/ Շահառուին տեղեկացնել ապահովագրական գումարի նվազման մասին:

14. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

- 14.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովադիրը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին անհապաղ հայտնել պայմանագիրը կնքելիս ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա:

Բոլոր դեպքերում էական են համարվում ապահովագրության պայմանագրում նախատեսված փոփոխությունները, ինչպես նաև.

 - 14.1.1. ՏՄ վարձակալության, լիզինգի, գրավի հանձնումը,
 - 14.1.2. ՏՄ վարելու կամ օգտագործելու մասին լիազորագրի տրամադրումը անձին, ով ապահովագրության պայմանագրով ՏՄ վարելու լիազորություն չունի,
 - 14.1.3. Ապահովագրված ՏՄ-ի գրանցման փաստաթղթերի, բանալիների ազդանշանային համակարգի հեռակառավարման վահանակի, գրանցման համարանիշների կորուստը կամ

կողոպուտը,

- 14.1.4. օգտագործելու և պահելու պայմանների էական փոփոխությունը:
- 14.2. Ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողը իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում՝ ռիսկի աստիճանի մեծացմանը համաչափ:
- 14.3. Եթե Ապահովադիրը ռիսկի աստիճանի փոփոխման մասին տեղյակ չի պահում Ապահովագրողին կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար չի վճարում, ապա ապահովագրողը ապահովագրության պայմաններին համապատասխան իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը և պահանջելու լուծել ապահովագրության պայմանագիրը և հատուցելու պայմանագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները կամ նվազեցնելու հատուցման չափը կամ չնվազեցնելու ապահովագրավճարը:

15. ՍՈՒԲՐՈՂԱՑԻԱ

- 15.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրն պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:
- 15.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադիր (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:
- 15.3. Ապահովադիրը (շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- 15.4. Եթե Ապահովադիրը (շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադիր (շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:
- 15.5. Եթե Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանցից ստացել է պատճառված վնասի դիմաց հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմանագրի և սույն ապահովագրության Պայմաններով նախատեսված վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացած գումարի տարբերությունը:
- 15.6. Բոլոր այն դեպքերում, երբ Ապահովագրական հատուցում կատարելուց հետո պարզ է դարձել, որ դեպքն Ապահովագրական պատահար չէր և/կամ ենթակա չէր հատուցման, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրից/Շահառուից ետ պահանջել վճարված գումարը և լրացուցիչ ծախսերը:

16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 16.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրերից բխող վեճերը քննվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
- 16.2. Վնասի չափի և դրա պատճառների վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փորձաքննության անցկացում: Լրացուցիչ փորձաքննությունն անց է կացվում այն պահանջած կողմի հաշվին: Եթե

փորձաքննությունն անց է կացվել Ապահովադրի հաշվին, և փորձաքննության արդյունքները ճանաչվել են Ապահովագրողի կողմից, ապա վերջինս հատուցում է Ապահովադրին փորձաքննության եզրակացության մեջ նշված վնասի չափով: Ընդ որում՝ հատուցման ընդհանուր չափը չի կարող գերազանցել ապահովագրական պատահարի պահին Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր չափը: